11614

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«16» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 242-25

Նախաձեռնող՝ ***Կապանի համայնքապետարան***
Սյունիքի մարզ, Կապան համայնք, ք. Կապան, Չարենցի փողոց թիվ 1

Գործունեությունը՝ ***Կապան բնակավայրի Գործարանային փողոց թիվ 36/1, 36/2, 36/3 հասցեներում մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցում***
Սյունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 242-25

«16» հոկտեմբերի 2025թ.

Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան բնակավայրի Գործարանային փողոց 36/1, 36/2, 36/3 հասցեներում մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Կապանի համայնքապետարան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Կապան համայնք, Կապան բնակավայր

Ներածական մաս. Կապանի համայնքապետարանի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Կապան բնակավայրում կառուցել համայնքի կարիքների սպասարկման համար մեքենամեխանիզմների տեխնոպարկ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Սույն գործունեության նախագծման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականները (ծածկագիր՝ 09-001-0550-0009, 09-001-0550-0011, 09-001-0550-0012, 09-001-0550-0113) և Սյունիքի մարզի Կապան համայնքի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 16-ին տրված N196 նախագծման թույլտվությունը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների է, գործառնական նշանակությունը՝ տրանսպորտի, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Երևանից 320 կմ հարավ-արևելք՝ Ողջի գետի ափին՝ Խուստուփ լեռան հյուսիսային ստորոտին՝ ծովի մակարդակից 910 մ բարձրության վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Տեղամասում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ներկայացված տվյալների գտնվում են 10 մետրից խորը հորիզոններում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է Երևան-Կապան մայրուղու ձախակողմյան մասում: Այն իրենից ներկայացնում է ազատ տարածք՝ ծառերի բացակայությամբ: Տարածքը կառուցապատվելու է պարագծով, որն իր հերթին բաժանվելու է երեք հատվածների՝ վերին, միջնամասային և ստորին շարքերի:

Վերին շարքում նախատեսված են բաց շվաքարաններ՝ 5 մետր բարձրությամբ՝ 14 միավոր տեխնիկայի համար, միջնամասում նախատեսված են 5 մետր բարձրությամբ բաց շվաքարաններ՝ 7 միավոր տեխնիկայի համար, իսկ ձախակողմյան շարքում կլինեն 5 հատ 8 մ բարձրությամբ բաց բոքսեր՝ սպասարկման, վերանորոգման համար և այլն:

Ստորին շարքում տեղակայված կլինեն 10 հատ 8 մ բարձրությամբ փակ բոքսեր՝ սպասարկման, վերանորոգման համար, նաև կծառայեն որպես պահեստներ՝ մեքենաների պահեստային մասերի, շինանյութերի, առաջին անհրաժեշտ ապրանքների համար: Նախատեսված են բաց և փակ տարածքներ, յուղերը պահպանելու համար պահեստներ, մեքենաների նորոգման տարածք և այլն: Որոշ փակ բոքսերում նախատեսված են փոսորակներ՝ մեքենան զննելու և նորոգելու համար:

Գործունեության տարածքի առանձին հատվածում նախատեսված են երկու հատ ճնշումով մեքենաների լվացման կայաններ՝ որտեղ կլինեն ջրի մաքրման սարքեր, որոնցով ջուրը տարածքից կհեռանա խողովակաշարով: Մեքենաների տեխնոպարկի տարածքը նախատեսված է ցանկապատել տուֆե քարով, իսկ լվացման կայանի ցանկապատը նախատեսված է մետաղից:

Տարածքում նախատեսված է երկու հարկանի վարչական մասնաշենք՝ նկուղային հարկով: Նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց աշխատակիցների և բնակչության համար, նախատեսված են զուգարաններ, պահեստ՝ տարբեր նշանակության իրերի համար և այլն: Վարչական շենքի առաջին հարկում նախատեսված են աշխատակիցների համար կենցաղային նշանակության տարածքներ՝ ցնցուղարան, զուգարան, հանդերձարան, զգեստապահարաններ, ճաշասրահ և այլն: Կենցաղային մասը երկրորդ մուտքով անմիջապես կապված է լինելու հավաքակայանի տարածքի հետ: Մուտքի վերջնամասում կլինի 50 հոգու համար նախատեսված ճաշասրահ՝ խոհանոցային անհրաժեշտ պարագաներով, սառնարանով, լվացարանով և այլն: Վարչական շենքի առաջին հարկի գլխավոր մուտքի մոտ կլինի երկրորդ հարկ բարձրացող աստիճանավանդակը, էլեկտրավահանակային սենյակը: Երկրորդ հարկում նախատեսված են վարչական նշանակության սենյակներ, ընդհանուր օգտագործման զուգարաններ, պահակի սենյակ և այլն: Բոլոր մուտքերի և նկուղ տանող աստիճանների վրա նախատեսված են անձրևապաշտպան հովարներ: Էներգախնայողության նպատակով, պատերը և տանիքը կլինեն ջերմամեկուսացված:

Գլխավոր մուտքի մոտ նախատեսված է սակավաշարժ անձանց համար թեքահարթակ, առաջին հարկում՝ զուգարան, աշխատասենյակ: Ավտոկայանատեղիներն ապահովված կլինեն հակահրդեհային՝ ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով: Նախատեսված է նաև օդափոխության համակարգ:

Տանիքի ջրահեռացումն իրականացվելու է ջրատար խողովակներով, ջրհորդանով, որտեղից էլ ուղղվելու են դեպի սպասարկող կից ճանապարհ:

Կենցաղային կեղտաջրերը պոլիէթիլենային ծալքավոր SN8 տիպի խողովակներով կհեռանան բակային ցանց, որը միացված կլինի գործող կոյուղատարին: Հատակների և մեքենամասերի լվացման կեղտաջրերը կլցվեն հատակի վրա նախատեսված կիսախողովակային առվակների մեջ, որտեղից կանցնեն ջրընդունիչ կոնքեր մեխանիկական մաքրման համար, յուղերից և բենզինից մաքրվելով բենզորսիչում՝ բակային ցանցով կհեռանան դեպի կոյուղի:

Գործունեության տարածքում գազամատակարարում չի նախատեսվում:

Որպես ջեռուցման սարքեր կլինեն պատին ամրացվող էլեկտրական ռադիատորներ: Կենցաղային տաք ջրի մատակարարումը կիրականացվի նկուղային հարկում նախատեսված 500 լ ծավալով կուտակային ջրատաքացուցիչ բաքից, որի համար որպես ջերմության աղբյուր կծառայի 48 կՎտ հզորությամբ էլեկտրական կաթսան:

Շինարարության և շահագործման փուլերում նախատեսվում է աղբը տեղափոխել Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ նախատեսվող պայմանագրի համաձայն: Տեղադրվելու են 6 հատ 1*1.5 չափերի աղբի տեսակավորման աղբամաններ:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

	Հավաքակայան	Մակերես (քմ)	Լվացման կայան	Մակերես (քմ)
	Ընդհանուր հողամասի մակերես (Գործարանային 36/1 և 36/2)	4919.9	Ընդհանուր հողամասի մակերես (Գործարանային 36/3)	830.0
	Կառուցապատման մակերես • Բոքսեր • Շվաքարաններ • Վարչական մասնաշենք Ընդամենը	 1290.0 1178.9 345.6 2814.5 /57.2 %/	Կառուցապատման մակերես	266.2 /32.6 %/
	Ճանապարհներ, սալվածքներ	2105.4 /42.8 %/	Ճանապարհներ	222.7 /26.3 %/
			Կանաչապատ մակերես	341.1 /41.1 %/

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի 23197 խմ, որից հետլիցքը՝ 2941 խմ, իսկ ավելացած 20256 խմ հողային զանգվածը կհեռացվի Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է Կապանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Կանաչապատ տարածքները ջրելու համար կօգտագործվեն ջրցան մեքենաներ, որը նախատեսվում է մատակարարել Կապանի հրշեջ կայանից:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների և հողային աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, շինհրապարակի ցանկապատում և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար:

Հողային ռեսուրսների պահպանության համար՝

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ,
- անհրաժեշտ է ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր: Շինարարական աշխատանքների ընթացքում կառաջանա չտեսակավորված աղբ, որը կհավաքվի աղբամաններում և պարբերաբար կտեղափոխվի համայնքի կենցաղային կոշտ թափոնների աղբավայր: Շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումը կիրականացվի մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերի պահպանում, չափագրման իրականացում և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակներ՝ հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն: Հնարավոր

ազդեցությունների բացառման և նվազեցման համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնք տրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինհրապարակում տեղադրվելու են նմուշառիչներ և համայնքն առցանց հետևելու է տվյալներին 24 ժամյա ռեժիմով՝ մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի վերահսկման նպատակով,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ շինհրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կառուցապատման տարածքի և հարևան տարածքների կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճին և խնամքին, չորացած տեսակները փոխարինի նորերով: Կանաչ տարածքների խնամքի պատասխանատու է հանդիսանում կապալառուն, իսկ վերահսկողությունը կիրականացնի համայնքը:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնի շենքում անցկացված հանրային լսումներին գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Սյունիքի մարզպետարանից, Կապանի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել համայնքի հետ համաձայնեցված՝ տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
6. Մինչև կառուցապատման աշխատանքների սկսելն անհրաժեշտ է՝ սպասարկող կազմակերպությունների կողմից տրամադրված տեխնիկական պայմաններին համապատասխան մշակել ինժեներական ենթակառուցվածքների վերջնական նախագծային փաստաթղթերը և դրանք համաձայնեցնել իրավասու մարմինների հետ:
7. Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Կապանի համայնքապետարանի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան բնակավայրի Գործարանային փողոց թիվ 36/1, 36/2, 36/3 հասցեներում մեքենամեխանիզմների տեխնոպարկի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան